



ք. Իջևան, Ուսանողական փ 3

հեռ. - 093007010

էլ. հասցե: info_idjevan@aarhus.am, david.ghazaryan.83@mail.ru

N Ե - 002

« 12 » Մայիս 2014թ

*ՀՀ Տավուշի մարզի
Իջևանի քաղաքապետ
պարոն՝ Վ. Ղալումյանին*

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ղալումյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Իջևանի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն <<Իջևան-1>> ՓՀԷԿ-ի կառուցման մասին.

1. Ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել Իջևանի համայնքին <<Ջուրլույս>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Իջևան-1>> ՓՀԷԿ-ի կառուցման նախագծային փաստաթղթերին ծանոթացնելու ուղղությամբ,
2. Ի՞նչ կարծիք է հայտնել հանրությունը <<Իջևան 1>> ՓՀԷԿ-ի աշխատանքային նախագծի վերաբերյալ,
3. Ուսումնասիրվե՞լ են, արդյոք, դրա բնապահպանական հետևանքները,
4. Իջևան քաղաքի զարգացման ծրագրի ո՞ր կետին է համապատասխանում նախագիծը,
5. քաղաքապետարանը ՀԷԿ-ի կառուցման համար իրականացրե՞լ է հողահատկացում, եթե՛ այո, խնդրում եմ տրամադրել պատճենը:


Խնդրում եմ նաև տրամադրել <<Ջուրլույս>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Իջևան-1>> ՓՀԷԿ-ի կառուցման նախագծային փաստաթղթերի պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Իջևանի Օրհուս կենտրոնի համակարգող՝

 Գ. Ղազարյան